

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ

ԲԵՆԻԼՅՈՒՔՍԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ,
ԼՅՈՒՔՍԵՄԲՐՈՒՐԳԻ ՄԵԾ ԴՔՍՈՒԹՅՈՒՆ, ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ) ՄԻՋԵՎ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝
ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ
(ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԿԻՐԱՐԿՈՂ

Հայաստանի Հանրապետությունը և Բենիլյուքսի պետությունները (Բելգիայի Թագավորություն, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն և Նիդերլանդների Թագավորություն), այսուհետև՝ Կողմեր,

հիմնվելով 2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում ստորագրված՝ «Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ոռադմիսիայի) մասին» համաձայնագրի 20-րդ հոդվածի վրա, այսուհետև՝ Համաձայնագիր, համաձայնեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Իրավասու մարմինների նշանակումը (Համաձայնագրի 20-րդ հոդվածի 1-ին պարբերություն)

1. Կողմերը փոխանակում են Համաձայնագրի իրականացման իրավասություն ունեցող մարմինների և մյուս Կողմերի տարածքներում հավատարմագրված իրենց դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունների ցուցակները սույն Արձանագրության կնքումից հետո երեսուն (30) օրվա ընթացքում:

2. Կողմերն անմիջապես միմյանց ծանուցում են սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված ցուցակներում կատարված ցանկացած փոփոխության մասին:

ՀՈԴՎԱԾ 2

Սահմանային անցակետերի նշանակումը (Համաձայնագրի 20-րդ հոդվածի 1-ին պարբերություն)

1. Համաձայնագրի կիրառման համար օգտագործվող սահմանային անցակետերը թվարկված են սույն Արձանագրության 1-ին Հավելվածում:

2. Կողմերն անմիջապես միմյանց տեղեկացնում են սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված ցուցակում կատարված ցանկացած փոփոխության մասին:

3. Իրավասու մարմինները կարող են համաձայնության գալ Համաձայնագրի կիրառման համար օգտագործել սահմանային այլ անցակետեր՝ կախված առանձին դեպքից:

ՀՈԴՎԱԾ 3

Հետընդունման դիմում ներկայացնելը (Համաձայնագրի 7-րդ, 8-րդ հոդվածներ և 11-րդ հոդվածի 1-ին պարբերություն)

1. Հետընդունման դիմումը ներկայացվում է անմիջապես հարցում ստացած պետության իրավասու մարմնին՝ գրավոր, էլեկտրոնային փոստի, ֆաքսի կամ հեռահաղորդակցման այլ միջոցներով: Եթե հետընդունման դիմումով հարցազրույց է հայցվում, ապա դիմումի պատճենն ուղարկվում է նաև հարցում ստացած պետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն:

2. Հետընդունման դիմումը ներկայացվում է Համաձայնագրի 5-րդ Հավելվածով սահմանված ձևով:

3. Հետընդունման առանձին դիմումի վերաբերյալ հավելյալ տեղեկություններ տրամադրելու կամ ստանալու համար հարցում ներկայացրած պետությունը դիմում է հարցում ստացած պետության իրավասու մարմնին:

ՀՈԴՎԱԾ 4

Հետընդունման դիմումին պատասխանելը (Համաձայնագրի 11-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ պարբերություններ)

1. Հետընդունման դիմումի պատասխանն ուղարկվում է հարցում ներկայացրած պետության իրավասու մարմնին՝ գրավոր, էլեկտրոնային փոստի, ֆաքսի կամ հեռահաղորդակցման այլ միջոցներով: Այդ պատասխանի պատճենը միաժամանակ ներկայացվում է հարցում ստացած պետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությանը:

2. Հետընդունման դիմումին անհրաժեշտ է պատասխանել տասներկու (12) օրացուցային օրվա ընթացքում՝ օգտագործելով սույն Արձանագրության 2-րդ Հավելվածով սահմանված ձևը:

ՀՈԴՎԱԾ 5

Ճամփորդական փաստաթղթեր (Համաձայնագրի 3-րդ հոդվածի 4-րդ պարբերություն և 5-րդ հոդվածի 4-րդ պարբերություն)

1. Հետընդունման դիմումի դրական պատասխանի դեպքում հարցում ստացած պետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունը առանց հետաձգման, բայց ոչ ուշ, քան երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում, հարցում ներկայացրած պետության իրավասու մարմիններին տրամադրում է վերադարձի համար պահանջվող ճամփորդական փաստաթուղթը՝ Համաձայնագրի

3-րդ հոդվածի 4-րդ պարբերության և 5-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն:

2. Ճամփորդական փաստաթղթի վավերականության ժամկետը 120 օր է:

3. Եթե Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունը չի տրամադրել պահանջվող ճամփորդական փաստաթուղթը սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված ժամկետում, համարվում է, որ Հայաստանը համաձայնություն է տվել ԵՄ՝ վտարման համար օրինակելի ճամփորդական փաստաթղթի օգտագործմանը: Այդ նպատակով օգտագործվող փաստաթուղթը կցված է՝ որպես սույն Արձանագրության 3-րդ Հավելված:

ՀՈԴՎԱԾ 6

Հարցազրույցներ

(Համաձայնագրի 9-րդ հոդվածի 3-րդ պարբերություն)

1. Եթե հարցում ներկայացրած պետությունն անկարող է ներկայացնել Համաձայնագրի 9-րդ հոդվածում նշված որևէ փաստաթուղթ, և հարցում ստացած պետությունը չի կարողանում որևէ այլ կերպ հաստատել հետընդունման ենթակա անձի քաղաքացիությունը, ապա հարցում ստացած պետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունը անցկացնում է հարցազրույց՝ անձի քաղաքացիությունը հաստատելու համար:

2. Հարցազրույցն անցկացվում է առանց հետաձգման, սակայն ցանկացած պարագայում հետընդունման դիմումն ստանալու օրվանից ամենաուշը հինգ (5) աշխատանքային օրվա ընթացքում:

3. Հարցում ստացած պետությունն անմիջապես և ցանկացած պարագայում հարցազրույցից հետո ամենաուշը երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում, տեղեկացնում է հարցում ներկայացրած պետությանը հարցազրույցի արդյունքների մասին:

ՀՈԴՎԱԾ 7

Փոխադրումը

(Համաձայնագրի 12-րդ հոդված)

1. Հարցում ներկայացրած պետության իրավասու մարմինը առնվազն երկու (2) օր առաջ գրավոր, էլեկտրոնային փոստի, ֆաքսի կամ հեռահաղորդակցման այլ միջոցներով ծանուցում է հարցում ստացած պետությանը նախատեսված փոխադրման մասին: Այդ նպատակով օգտագործվում է սույն Արձանագրությանը որպես 4-րդ Հավելված կցված ձևը: Այդ ձևի պատճենը տրամադրվում է հարցում

ստացած պետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությանը:

2. Եթե հարցում ներկայացրած պետությունն անկարող է փոխադրել հետընդունման ենթակա անձին երեք (3) ամսվա ընթացքում, ապա անմիջապես տեղեկացնում է հարցում ստացած պետության իրավասու մարմնին: Երբ տվյալ անձի փաստացի փոխադրումը հնարավոր է կատարել, հարցում ներկայացրած պետության իրավասու մարմինը տեղեկացնում է հարցում ստացած պետությանը՝ օգտագործելով սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված ձևը և փոխադրման համար կիրառելի ժամկետներին համապատասխան:

3. Որպես կանոն՝ փոխադրումը կատարվում է օդային ճանապարհով: Անհրաժեշտության դեպքում կարող են կիրառվել չարտերային չվերթները:

4. Եթե առկա են ցամաքային փոխադրումը հիմնավորող պատճառներ, ապա հարցում ներկայացրած պետության իրավասու մարմինները հատուկ նշում են կատարում այդ մասին սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված ձևում:

ՀՈԴՎԱԾ 8

Տարանցման ընթացակարգը (Համաձայնագրի 14-րդ և 15-րդ հոդվածներ)

1. Ծրագրված տարանցման օրվանից առնվազն յոթ (7) աշխատանքային օր առաջ հարցում ստացած պետության իրավասու մարմիններին ներկայացվում է տարանցման դիմում՝ գրավոր, էլեկտրոնային փոստի, ֆաքսի կամ հեռահաղորդակցման այլ միջոցներով:

2. Դիմումը կազմվում է Համաձայնագրի 6-րդ Հավելվածով սահմանված ձևով:

3. Տարանցման դիմումի պատասխանն ուղարկվում է հարցում ներկայացրած պետության իրավասու մարմիններին՝ գրավոր, էլեկտրոնային փոստի, ֆաքսի կամ հեռահաղորդակցման այլ միջոցներով, երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում՝ նշելով համաձայնությունը տարանցմանը և տարանցման ծրագրված ժամկետը, նշանակված սահմանային անցակետը, փոխադրման եղանակները և ուղեկցորդների օգտագործումը: Այդ պատասխանը տրվում է սույն Արձանագրության 5-րդ Հավելվածով սահմանված ձևով:

4. Տարանցումը սկզբունքորեն կատարվում է օդային ճանապարհով:

ՀՈԴՎԱԾ 9

Աջակցություն տարանցման ընթացքում

1. Եթե հարցում ներկայացրած պետությունն անհրաժեշտ է համարում հարցում ստացած պետության իրավասու մարմինների աջակցությունը որևէ առանձին տարանցման համար, ապա Համաձայնագրի 6-րդ Հավելվածով սահմանված ձևի Գ. «ՆՇՈՒՄՆԵՐ» կետում նշում է կատարում հայցվող աջակցության բնույթի ու բովանդակության վերաբերյալ:

2. Տարանցման դիմումի պատասխանում հարցում ստացած պետությունը նշում է, թե արդյոք կարող է տրամադրել հայցվող աջակցությունը: Անհրաժեշտության դեպքում Կողմերը կարող են առավել մանրամասն խորհրդակցություններ անցկացնել:

3. Եթե տվյալ անձն ուղեկցվում է հարցում ստացած պետության տարածքում, ապա պաշտպանությունը և հնարավոր նստեցումը կատարվում է այդ պետության իրավասության ներքո և, հնարավորության դեպքում, այդ պետության աջակցությամբ:

ՀՈԴՎԱԾ 10

Ուղեկցորդների պարտավորությունները

1. Ուղեկցորդները նշանակվում են հարցում ներկայացրած պետության կողմից և պատասխանատու են հետընդունման կամ տարանցման ենթակա անձին ուղեկցելու համար:

2. Հարցում ստացած պետության տարածքում ուղեկցորդները բոլոր հանգամանքներում պետք է գործեն հարցում ստացած պետության օրենսդրությանը համապատասխան:

3. Ուղեկցորդների իրավասությունը սահմանափակվում է ինքնապաշտպանությամբ: Ի հավելումն. հարցում ստացած պետության պաշտոնատար այն անձանց բացակայության դեպքում, որոնք լիազորված են անհրաժեշտ գործողություններ ձեռնարկել, կամ այդ պաշտոնատար անձանց աջակցելու նպատակով, ուղեկցորդները անմիջական և լուրջ սպառնալիքի դեպքում կարող են ողջամիտ ու համաչափ կերպով արձագանքել՝ կանխելու համար տվյալ անձի փախուստը, ինքն իրեն կամ երրորդ անձին վնասելը կամ գույքին վնաս պատճառելը:

4. Ուղեկցորդներն իրենց առաջադրանքը կատարում են առանց զենքի և քաղաքացիական հագուստով: Նրանք պետք է ունենան ուղեկցման թույլտվություն, հետընդունման կամ տարանցման համաձայնությունը և նույնականացման քարտ:

5. Հարցում ստացած պետության իշխանությունները Համաձայնագրի շրջանակներում ուղեկցորդների պարտականությունների կատարման ժամանակ նրանց տրամադրում են այն նույն պաշտպանությունն ու աջակցությունը, որը տրամադրվում է նույն գործողություններն իրականացնելու լիազորություն ունեցող իրենց պաշտոնատար անձանց:

ՀՈԴՎԱԾ 11
Ծախսերը
(Համաձայնագրի 16-րդ հոդված)

1. Հետընդունման և տարանցման գործողությունների կապակցությամբ հարցում ստացած պետության կրած ծախսերը, որոնք պետք է հոգա հարցում ներկայացրած պետությունը՝ Համաձայնագրի 16-րդ հոդվածի համաձայն, պետք է փոխհատուցվեն հարցում ներկայացրած պետության կողմից հաշիվ-ապրանքագիրը ներկայացնելուց հետո: Հաշիվ-ապրանքագրում նաև նշվում են հարցում ստացած պետության բանկային տվյալները:

2. Հարցում ներկայացրած պետությունը բոլոր ծախսերի դիմաց վճարում է հարցում ստացած պետությանը հաշիվ-ապրանքագիրն ստանալուց հետո՝ երեսուն (30) օրվա ընթացքում:

ՀՈԴՎԱԾ 12
Փորձագետների հանդիպումը

1. Կողմերը համագործակցում են՝ Համաձայնագրի և սույն Արձանագրության իրականացման համատեքստում ծագող խնդիրները լուծելու համար:

2. Կողմերից որևէ մեկի խնդրանքով հրավիրվում է Կողմերի իրավասու մարմինների ներկայացուցիչներից կազմված փորձագետների հանդիպում:

ՀՈԴՎԱԾ 13
Լեզուն

Կողմերը միմյանց հետ հաղորդակցվում են անգլերենով:

ՀՈԴՎԱԾ 14
Հավելվածները

1. 1-ից 5-րդ Հավելվածները կազմում են սույն Արձանագրության անբաժանելի մասը:

2. Սույն Արձանագրության հավելվածների ցանկացած փոփոխություն գրավոր համաձայնեցվում է Կողմերի միջև և ուժի մեջ է մտնում Կողմերի սահմանած պայմաններով:

ՀՈԴՎԱԾ 15 Փոփոխություններ

1. Սույն Արձանագրությունը կարող է փոփոխվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

2. Արձանագրության ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում սույն Արձանագրության 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններում սահմանված ընթացակարգին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 16 Տարածքային կիրառելիությունը (Համաձայնագրի 22-րդ հոդված)

Սույն Արձանագրությունը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում և Բելգիայի Թագավորության տարածքում, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության տարածքում և Նիդերլանդների Թագավորության տարածքում, որտեղ կիրառելի է Եվրոպական միության գործունեության մասին պայմանագիրը:

ՀՈԴՎԱԾ 17 Ավանդապահը

Սույն Համաձայնագրի ավանդապահը Բենիլյուքսի գլխավոր քարտուղարությունն է: Ավանդապահը Բենիլյուքսի յուրաքանչյուր պետության տրամադրում է բնօրինակի հաստատված պատճենը:

ՀՈԴՎԱԾ 18 Ուժի մեջ մտնելը, կասեցումը և դադարեցումը (Համաձայնագրի 23-րդ հոդվածի 2-րդ պարբերություն)

1. Կողմերը միմյանց և ավանդապահին ծանուցում են սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու համար սահմանված ներպետական ընթացակարգերի ավարտի մասին:

2. Համաձայնագրի 23-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում երկրորդ ամսվա առաջին օրը այն ամսաթվից հետո, երբ ավանդապահը ծանուցում է Հետընդունման հարցերով համատեղ


կոմիտեին, որ բոլոր Կողմերն ավարտել են դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը: Այդ ծանուցման պատճենը ավանդապահն ուղարկում է բոլոր Կողմերին:

3. Հայաստանի Հանրապետության և Բենիլյուքսի պետությունների (Բելգիայի Թագավորություն, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն և Նիդերլանդների Թագավորություն) միջև 2009 թվականի հունիսի 3-ին ստորագրված՝ «Առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի գործողությունը դադարում է սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո:


4. Սույն Արձանագրությունը կնքվում է անորոշ ժամկետով: Սույն Արձանագրության կիրարկումը կասեցվում է Համաձայնագրի կասեցման հետ միաժամանակ: Սույն Արձանագրության գործողությունը դադարում է Համաձայնագրի գործողությունը դադարելու հետ միաժամանակ:

Կատարված է Բրյուսել քաղաքում, 2018 թվականի հունիսի 20-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, հոլանդերեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում՝ յուրաքանչյուր լեզվով տեքստը հավասարապես նույնական է: Արձանագրության դրույթների մեկնաբանության ցանկացած տարբերության դեպքում գերակայում է անգլերեն լեզվով տեքստը:


Հայաստանի Հանրապետության
կողմից՝



Բելգիայի Թագավորության
կողմից՝



Լյուքսեմբուրգի Մեծ
Դքսության կողմից՝



Նիդերլանդների Թագավորության
կողմից՝



ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՑԱԿԵՏԵՐ

*Հայաստանի Հանրապետության համար՝
«Զվարթնոց» միջազգային օդանավակայան, Երևան*

*Բելգիայի Թագավորության համար՝
Բրյուսելի ազգային օդանավակայան, Բրյուսել*

*Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության համար՝
Լյուքսեմբուրգի օդանավակայան, Լյուքսեմբուրգ*

*Նիդերլանդների Թագավորության համար՝
Ամստերդամի Սքիփհոլ օդանավակայան, Ամստերդամ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ՝ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ
(ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԿԻՐԱՐԿՈՂ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ

ԲԵՆԻԼՅՈՒՔՍԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ,
ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳԻ ՄԵԾ ԴՔՍՈՒԹՅՈՒՆ, ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ)
ՄԻՋԵՎ

Հետընդունման դիմումի պատասխան
(սույն Արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ պարբերություն)

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՄՍԱԹԻՎ՝ ԳՈՐԾԻ N.

1- ԱՅՆ ԱՆՁԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ, ՈՒՄ ՀԱՄԱՐ ՀԵՏԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԱՅՑՎՈՒՄ
ԱՋԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆՆԵՐ
.....
.....

ԾՆՆԴՅԱՆ ԱՄՍԱԹԻՎ ԾՆՆԴՅԱՆ ՎԱՅՐ.....

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ.....

2- (ամսաթվին) ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԿԱՅԱՑՎԱԾ
ՈՐՈՇՈՒՄԸ

<input type="checkbox"/> ՀԱՍՏԱՏՎԱԾ	<input type="checkbox"/> ՄԵՐԺՎԱԾ
ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ՝ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԴԵՊՔՈՒՄ	

3 - ՀԱՏՈՒԿ ՆՇՈՒՄՆԵՐ

.....

ՊԱՇՏՈՆՅԱՅԻ ԱՆՈՒՆԸ	ԿՆԻՔ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
.....

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ՝ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ
(ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԿԻՐԱՐԿՈՂ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԲԵՆԻԼՅՈՒՔՍԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ,
ԼՅՈՒՔՍԵՄԲՐՈՒՐԳԻ ՄԵԾ ԴՔՍՈՒԹՅՈՒՆ, ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ)

ՄԻՋԵՎ

ԵՄ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

(սույն Արձանագրության 5-րդ հոդվածի 3-րդ պարբերություն)

ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ.....

ԳՐԱՆՅՄԱՆ ՀԱՄԱՐ

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԱՄԱՐ

ՎԱԿԵՐ Է ՄԵԿ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ.....-ից (երկիրը)

ԱԶԳԱՆՈՒՆ

ԱՆՈՒՆ

ԾՆՆԴՅԱՆ ԱՄՍԱԹԻՎ

ՀԱՍԱԿ

ՏԱՐԲԵՐԱԿԻՉ ՆՇԱՆՆԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՅԵ՝ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ (երբ հայտնի է)

ՏՐԱՄԱԴՐՈՂ ՄԱՐՄԻՆ

ՏՐՎԱԾ Է (վայրը).....

ԿՆԻՔ


ՏՐՎԱԾ (ամսաթիվը)

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ՝ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ
(ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԿԻՐԱՐԿՈՂ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ
ԲԵՆԻԼՅՈՒՔՍԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ,
ԼՅՈՒՔՍԵՄԲՐՈՒՐԳԻ ՄԵԾ ԴՔՍՈՒԹՅՈՒՆ, ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ)
ՄԻՋԵՎ

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՓՈՒՍԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
(սույն Արձանագրության 7-րդ հոդվածի 1-ին պարբերություն)

ԱՄՍԱԹԻՎ ԳՈՐԾ N.

ՁԵՐ ԴՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ (ամսաթիվ)

ՈՒՄ ԿՈՂՄԻՑ / ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆ/ (Հարցում ներկայացրած պետություն)
.....
Հեռ.՝ Ֆաքս՝ Էլ. հասցե՝

ՈՒՄ /ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆ/ (Հարցում ստացած պետություն)
.....
Հեռ.՝ Ֆաքս՝ Էլ. հասցե՝

1- ԱՅՆ ԱՆՁԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ, ՈՒՄ ՓՈՒՍԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՎՈՒՄ Է

ԱՋԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆՆԵՐ
.....
ԾՆՆԴՅԱՆ ԱՄՍԱԹԻՎ ԾՆՆԴՅԱՆ ՎԱՅՐ
ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

ԱՄՈՒՍԻՆ

Անուն

Ծննդյան ամսաթիվ

Քաղաքացիություն

**ԱՆՉԱՓԱՀԱՍ
ԵՐԵՒԱՆԵՐ** (թիվը)

Անուն (անուններ)

Ծննդյան ամսաթիվ

.....
.....
.....
.....
.....
.....
.....

2 - 1-ԻՆ ԿԵՏՈՒՄ ՆՇՎԱԾ ԱՆՁԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

(ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. այստեղ պետք է ներառվեն փաստաթուղթը տալու ամսաթիվը և վայրը, վավերականության ժամկետը և այլն)

1. ԱՆՑԱԳԻՐ

տրված (ամսաթիվ) (վայրը)
վավեր է մինչև(ամսաթիվ)

2. ԱՅԼ (ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

.....
.....
.....

(կցված պատճեններ)

3 - ՓՈԽԱԴՐՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ, ԺԱՄԸ, ՎԱՅՐԸ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

ՓՈԽԱԴՐՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ ԵՎ ԺԱՄԸ	
ՓՈԽԱԴՐՄԱՆ ՎԱՅՐԸ	

ՓՈԽԱԴՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ	ՕԴԱՅԻՆ/ՑԱՄԱՔԱՅԻՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ	

<p>- ԱԿՏՈՄԵՔԵՆԱ</p> <p>- ՕԴԱՆԱԿ</p>	<p>ԱՅՈՒՂՁ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ</p> <p>ԱՅՈՒՂՁ* ՉԿԵՐԹԻ ՀԱՄԱՐ</p>
<p>ՈՒՂԵԿՅՈՐԴ</p> <p>ՈՒՂԵԿՅՈՐԴՆԵՐԻ ԹԻՎԸ</p> <p>ՈՒՂԵԿՅՈՐԴՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ</p>	<p>ԱՅՈՒՂՁ*</p> <p>.....</p> <p>..</p> <p>1.</p> <p>...</p> <p>2.</p> <p>.....</p>
<p>ՊԱՏՃԱՌՆԵՐ, ԹԵ ԻՆՉՈՒ ՀԵՏԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԿԱՏԱՐԿԵԼ ՕԴԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ</p> <p>ՊԱԿԱՆՋՎՈՂ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ</p> <p>ՊԱԿԱՆՋՎՈՂ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ</p>	<p>.....</p> <p>..</p> <p>.....</p> <p>..</p> <p>.....</p> <p>..</p> <p>.....</p> <p>..</p> <p>.....</p> <p>..</p> <p>.....</p> <p>..</p> <p>.....</p> <p>..</p> <p>.....</p> <p>..</p> <p>.....</p> <p>..</p> <p>.....</p> <p>.....</p>

Ձեզից այն, ինչը կիրառելի չէ:

4- ԱՌԴԻՐՆԵՐ

<p>ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՔԱՆԱԿԸ (ներառյալ համառոտ նկարագրությունը)</p>	<p>1. _____ 2. _____ 3. _____ 4. _____ 5. _____ 6. _____</p>
---	--

<p>ՊԱՇՏՈՆՅԱՅԻ ԱՆՈՒՆ</p>	<p>ԿՆԻՔ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ</p>
--------------------------------	--------------------------------------

<p>ԾԱՆՈՒՑՈՒՄՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄ</p>

ԱՄՍԱԹԻՎ

<p>ՊԱՇՏՈՆՅԱՅԻ ԱՆՈՒՆ</p>	<p>ԿՆԻՔ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ</p>
--------------------------------	--------------------------------------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ՝ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ
ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ
ԿԻՐԱՐԿՈՂ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ
ԲԵՆԻԼՅՈՒՔՄԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԲԵԼԳԻԱՅԻ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳԻ ՄԵԾ ԴՔՍՈՒԹՅՈՒՆ,
ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ)
ՄԻՋԵՎ

ՏԱՐԱՆՑՄԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՊԱՏԱՍԽԱՆ
(սույն Արձանագրության 8-րդ հոդվածի 3-րդ պարբերություն)

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՄՍԱԹԻՎ..... ԳՈՐԾԻ N.....

1- ԱՅՆ ԱՆՁԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ, ՈՒՄ ՀԱՄԱՐ ՀԱՅՑՎՈՒՄ Է
ՏԱՐԱՆՑՈՒՄՈՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆՆԵՐ
.....
ԾՆՆԴՅԱՆ ԱՄՍԱԹԻՎ ԾՆՆԴՅԱՆ ՎԱՅՐ
ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

2- (ամսաթվին) ՏԱՐԱՆՑՄԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ
ՈՐՈՇՈՒՄԸ

<input type="checkbox"/> ՀԱՍՏԱՏՎԱԾ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ՝ ԲԱՅԱՍԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԴԵՊՔՈՒՄ	<input type="checkbox"/> ՄԵՐԺՎԱԾ
---	----------------------------------


3. ՀԱՏՈՒԿ ՆՇՈՒՄՆԵՐ

ՊԱՇՏՈՆՅԱՅԻ ԱՆՈՒՆ	ԿՆԻՔ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
------------------	---------------------------

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2018թ. հունիսի 20-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության և Բենիլյուքսի Պետությունների (Բելգիայի Թագավորություն, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն, Նիդերլանդների Թագավորություն) միջև «Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության միջև՝ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագիրը կիրարկող արձանագրության՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող հայերեն բնօրինակի նույնական պատճենն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետ՝




Սաթենիկ Աբգարյան